

ՔԱՂՎԱԾՔ # 1

“ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ” ՈւՎԿ ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ք. Երևան

22 հունիսի 2011թ

Հարց 2. “Ազգային Հիփոթեքային Ընկերություն” ՈւՎԿ ՓԲԸ 2010 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման վերաբերյալ:

1. Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ՝ գեկույցով ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահ Ք. Քարամյանը: Ներկայացնելով Ընկերության 2010թ տարեկան գործունեությունը՝ գեկուցողը ներկայացրեց Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները, ակտիվների, եկամուտների և ծախսերի կառուցվածքը, Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան շահույթի բաշխման առաջարկը՝ 2010 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթից 11,878,800.00 (տասնմեկ միլիոն ութ հարյուր յոթանասունուրեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը, իսկ շահույթի մնացած 180,000,000 (մեկ հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամը ուղղել Ընկերության կանոնադրական կապիտալի համալրմանը:

Քվեարկության դրվեց Ընկերության 2010 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը հաստատելու հարցը:

Օրակարգի երկրորդ հարցի քվեարկության արդյունքները հետևյալն են.

կողմ՝ 100% ձայներին տնօրինող բաժնետեր

դեմ՝ չկա

ձեռնպահ՝ չկա:

Քվեարկության արդյունքում ժողովը միաձայն

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ընկերության 2010 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը՝ 2010 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթից 11,878,800 (տասնմեկ միլիոն ութ հարյուր յոթանասունուրեց հազար ութ հարյուր) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի (գլխավոր պահուստի) համալրմանը, իսկ շահույթի մնացած 180,000,000 (մեկ հարյուր ութսուն միլիոն) ՀՀ դրամը ուղղել Ընկերության կանոնադրական կապիտալի համալրմանը:

Նիստը նախագահող՝

Արթուր Զավադյան

Նիստի քարտուղար՝

Մայրանուշ Գրիգորյան

23.06.2011